# ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

**Դեկտեմբերի 2-ին, շաբաթ. - Տօն Սրբոց Առաքելոցն եւ առաջին լուսաւորչացն մերոց Թադէոսի եւ Բարդուղիմէոսի:**

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Իսահակ աբեղա Պողոսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Եվ երբ գնաք, քարոզեցեք և ասացեք. «Երկնքի արքայությունը մոտեցել է» (Մատթ. Ժ 7) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 25):

**Դեկտեմբերի 3-ին, կիրակի. - Բ. կիր. Յիսնակաց:**

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Անուշավան եպիսկոպոս Ժամկոչյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը «Լոյծ զկօշիկս քո յոտից քոց, զի տեղիդ յորում կաս դու ի դմա՝ երկիր սուրբ է» (Ելք Գ 5) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 27):

**Դեկտեմբերի 9-ին, շաբաթ. - Յղութիւն Սուրբ Աստուածածնի յԱննայէ:**

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Եփրեմ աբեղա Սարգիսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

**Դեկտեմբերի 10-ին, կիրակի. - Գ. կիր. Յիսնակաց:**

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Գաբրիել աբեղա Սարգսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Երանի որ կերիցէ ճաշ յարքայութեան Աստուծոյ» (Ղուկ. ԺԴ 15) բնաբանով քարոզ խոսեց:

**Դեկտեմբերի 17-ին, կիրակի. - Դ. կիր. Յիսնակաց:**

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Գևորգ աբեղա Սարոյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

**Դեկտեմբերի 24-ին, կիրակի. – Ե. կիր. Յիսնակաց:**

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Մոմիկ վարդապետ Սարգսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

**Դեկտեմբերի 25-ին, երկուշաբթի. – Սրբոյն Ստեփաննոսի Նախավկային եւ առաջին մարտիրոսին:**

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Արարատ եպիսկոպոս Գալթագճյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

**Դեկտեմբերի 31-ին, կիրակի. - Զ. կիր. Ցինանկաց:**

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Նարեկ աբեղա Ավագյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Եւ ես ուխտեմ ձեզ՝ որպէս եւ Հայր իմ ուխտեաց ինձ զարքայութիւն» (Ղուկ. ԻԲ 29) բնաբանով քարոզ խոսեց: